

ՌԻՓԵՐՈՐԴ ՏՍՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 րուբլ 4 ֆտ տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մեջ:

Օտարաբարձրացիք գիտնում են ուղղակի
Тифлис. Редакция „Менкы“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և սուս օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բանին 2 կոպէկ:

Գիւղական բժշկանոցների մասին:—Ներքին
տեսուչիւնը Ներքին լուրեր:—Արտաքին
տեսուչիւնը:—Վասիլի Թղթակցութիւն: Նա-
մակ Թիֆլիսից:—Վշակի հեռագիրներ:—Յայ-
տարարութիւններ:

ԳԻՒԴԱԿԱՆ ԲԺՇԿԱՆՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր տեղական բժշկական շը-
ջանում հարց է յարուցված կով-
կասում գիւղական բժշկանոցներ
հիմնելու անհրաժեշտութեան մա-
սին, ինչպէս այդ տեսակները կան
ամեն տեղ արտասահմանում և
հիմնվում են Ռուսաստանում
զեմտփօի միջոցներով: Ի՞նչ հարկէ
աւելորդ կը լինէր երկար ու բա-
րակ բացատրել բժշկանոցների ան-
հրաժեշտութիւնը կիսամերկ և
կիսաքաղցած աղքատ գիւղական
ազգաբնակչութեան համար: Ար-
քանք որոնք ապրել են գիւղում,
և դիտել են գիւղացու կեանքը,
գիտեն թէ որքան տրամադրում
են դէպի զանազան հիւանդու-
թիւնները գիւղացու զեմտփօր
կարծիքը իր հոգի կտուրով, ան-
բաւարար սնունդը, այսինքն չոր
հացը, որ միշտ ապահոված է,
ծանր, անշտորհակալ աշխատանքը
և վերջապէս գիւղական դասի կա-
տարեալ սովորութիւնը... Կեանքի
այդ տեսակ ծանր պայմանների
հետ միասին, երեւակայեցէք ձեզ
խեղցի բժշկական օգնութեան,
զեղբրի և այն կատարեալ բացա-
կայութիւն: Պատահում է որ գա-
լին է մի ժողովրդական հեքիմ,
կողոպտում է շինականներին, որոնք
պատրաստ են իրանց վերջին ու-
նեցածը տալ առողջ լինելու հա-
մար, որովհետև առողջութիւնը
նրա համար ամենաթանկագին
բան է: Դեռ լաւ է, եթէ այդ
տեսակ նահապետական բժիշկը
նրան գերեզմանի չէ հասցնում:
Մենք օրինակներ գիտենք, որ հե-
քիմները առնում էին իրանց հի-
ւանդից մինչև 50 րուբլ բժշկու-
թեան համար, խմացնելով նրան
զանազան հարբեցնող և թոյնաւոր
խոտեր:

Գրեթէ ամեն մի գիւղում,
մինչև անգամ ամենաաղքատ գիւ-
ղում դուք տեսնում էք անպատ-
ճառ մի քարեայ եկեղեցի: Ուսում

նարանի անհրաժեշտութիւնը հաս-
կանում է այժմ ինքն գիւղացին:
Հերթը եկեղեցուց և ուսումնա-
րանից յետոյ բժշկանոցին է, գոր-
ծելու հերթը բժշկական վարչու-
թեանն է և մենք ուրախութեամբ
խմացանք որ այդ վարչութիւնը
սկսում է գործել: Մեր կարծի-
քով, այդ գործին հաստատ քա-
կզնաւորութիւն տալու համար
հարկաւոր է Թիֆլիսից ոչ հեռու
գտնվող գիւղերից մինի մէջ հիւ-
նել մի օրինակելի բժշկանոց, բայց
որովհետև մենք չունենք դրա հա-
մար դէմտփօի միջոցներ, մեր
երկրի մէջ նոյն իսկ զեմտփօն դեռ
մտցրած չը լինելով, այդ պատճա-
ռով կարելի է հիմնել այդ բժշ-
կանոցը մասնաւոր միջոցների վրա:
Դասնակով այդ բժշկանոցի օ-
րինակով կարող են հիմնված լի-
նել և ուրիշ բժշկանոցներ, այն
զանազանութեամբ միայն, որ ա-
ւելի ազոզ հանգամանքների մէջ
գրվելով, նորերը էլ հարկաւորու-
թիւն չեն ունենայ դիմել մասնա-
ւոր բարեգործութեանը: Մեզ կա-
րող են ասել որ մեզ մօտ չը կայ
մասնաւոր բարեգործութիւն, որ
բոլորը մեզանում հարուստ և ժը-
լատ են: Դորա հետ մենք չենք
կարող ամբողջութեամբ համա-
ձայնվել, որովհետև մեր տեղական
հարուստները, փոքրամասնութեան
բացառութեամբ, շատ անգամ
նուիրած են նշանաւոր գումարներ
յօդուտ զանազան բարեգործական
հիմնարկութիւնների: Մասնաւոր
մեր ֆինանսական շրջանի ներկա-
յացուցիչները համակրական կեր-
պով են վերաբերվում մեր ժողը-
վրդական լուսաւորութեան գործին:
Դպրոցը և գրադիտութիւնը,—
այդ մեր հայոց հասարակութեան
օրվայ խնդիրն է և մենք հա-
ւանում ենք այնպիսի առատաձեռն
նուիրատուութիւնների, ինչպէս օրի-
նակ, պ. Թայրօլի իր հայրենի
գիւղի դպրոցին տուած 4000
րուբլ գումարը: Բայց մենք յիշե-
ցնում ենք, որ ժողովրդական լու-
սաւորութեան խնդրի շարքում
յարուցվում է այժմ և ժողովը-
րդական առողջութեան խնդիրը,
գիւղական դպրոցից յետոյ պէտք
է հիմնել և գիւղական բժշկանոցը
և համարձակվում ենք յուսալ, որ

մեր հասարակութիւնը նոյն հա-
մակրութեամբ կը վերաբերվի դէ-
պի այդ ծնվող գործը, ինչպէս
մինչև այժմ վերաբերվում էր դէ-
պի դպրոցական գործը, և կը
պահպանի իր նշանակալից գործի
սկզբնաւորութիւնը, մինչև այն
ժամանակ, երբ նոյն ինքն գործը
կը ստանայ մի օրինական հաս-
տատութիւն և կունենայ սեփա-
կան աղբիւրներ իր գոյութեան
համար:

Օր. Բ-եան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի, մայիսի 21-ին, առաջին անգամ
կօնցերա կար ԹԻՖԼԻՍՈՒՄ նոր շինված Արծրուտ.
Թատրոնում: Կօնցերա տալիս էր Ս. Պետերբուր-
գից եկած տ. Մէնչիկովա երգիչը, ու Լավրովի
հետ: Կանցիլի լուսաւորութիւնը գեղեցիկ է: Դա-
տերը կարծում էին, որ դասիլի բէզօսան սը
լաւ չէ լինի, բայց յայտնվեցաւ, որ ա կ ու ս տ ի ա-
կան կողմից դասիլի շատ լաւ է և ամենաբա-
րակ, ամենամաքուր պիւրանիստի մօ անգամ լըս-
վում է:

Վաղը, հինգշաբթի, մայիսի 24-ին աշխարհա-
նակ երաժիշտ Յուլիան-աճող Հենրիխ Վ. Կենիսիս-
կի տալու է մի կօնցերա Արծրուտ. Թատրոնի
մէջ: Լաւ է ենք որ պարսի կերպորդ կօնցերա
լինելու է շարքի օր, մայիսի 26-ին: Վենիսիկի
այնքան յայտնի է, որ մենք աւելորդ ենք համար-
ում դրան մեր հասարակութեան ծանօթացնել:

Մեզ խնդրում են յայտնել, որ մայիսի 29-ին
ՓՕԹԻՎՅ գուրս գալու է, եթէ եղանակը ազոզ
լինի, ուղեովելով դէպի Ա. Պոլսի և Մարտի,
Փրանսիական «Les Vosges» շոքիւնաւոր, որի կա-
պիտանն է պ. Պալուս:

Մեզ հաղորդում են ՂԱՐՍԻՅ, որ այնտեղի հայ
հասարակութիւնը կիրակի օրերը հաւաքվում է
տեղական ընկերացարանի մէջ, որտեղ անդամնե-
րից մէկը բարձր կարգում է որ և է դիրք: Վեր-
ջին ժողովին ներկայ են գտնվել նոյնպէս մի քա-
նի դպրացի տիկիներ:

Մեզ հաղորդում են ԳԻՆԻՉԱՆԻՅ, որ այնտեղ
հաւաքած գումարը յօդուտ Արարատեան ընկե-
րութեան, որի մասին տպված էր «Մշակի» №
69-ի մէջ, պիտաւորապէս օտարներէն է ստացված:
Բուն դիվիզանցի գրեթէ ոչինչ չեն նուիրել, ինչ-
պէս չեն նուիրում և իրանց ուսումնարանին: Գի-
նիշանցին յայտնի է իր ծուլութեամբ և իր ան-
տարբերութեամբ դէպի ազգային գործերը:

Կիրակի, մայիսի 27-ին, Արծրուտ. Թատրոնում
պ. Տէր-Գաւթեանը իր օգտին տալու է մի հայե-
րէն ներկայացում: Կը խաղացվեն «Միջին-մարդ»
կոմիդիա հեղ. Պատկանեանի և «Պատաններուն
խրատ» վոզ. հեղ. հանգ. Մ. Տէր-Գրիգորեանի:

Վերջին ժամանակներս մի քանի դատարկաբլիկ
կրիտասարդներ «Ջրի խարչուխը» պակասելու ժա-
մանակ դիմում են մի հեշտ միջոցի—Թատրոնի:
Դրանք հաւաքում են մի քանի ծոյլ գիմնապատ-
նիքին և նրանց օգնութեամբ կազմում են սիրող-
ների ներկայացումներ: Այդպիսի մի ներկայացումն

տեղի ունեցաւ ամիս 20-ին Ներսիսեան հին ու-
սումնարանի դահլիճում: Ներկայացնում էին Վեր-
կուսա էլ քաղցած ենք, երկուս էլ փող չունենք
և «Վայ իմ կորած յիսուն ոսկի» վոզբլիները և
անտարկտիկներում կարգում էին Գամառ-Պաթիպալի
բանաստեղծութիւնները: Մենք կարծու թէ զբա-
նվում էինք բաղադանի մէջ, ոչինչ Թատրոնական չը
կար այդ երեսաների մէջը: Գուրս էին գալիս
բնաւ իրանց շորերով, ոչ գրիմ, ոչ կարգ և ոչ կա-
նոն. կարգում էին բանաստեղծութիւնները կամը-
մայով, երևում էր թէ կարդալ նոր էին սովորում:
Մեզ շատ զարմացրեց մի բան միայն, որ այդ
երեսաների խմբի մէջ գտնվում էր և մի ուսա-
նող: Այդ երկերը Թատրոնում գտնվում էին այն-
պիսիները, որոնք երբէք թատրոն չէին տեսած,
բայց նրանց ևս ձանձրացնում էր և չէր հետաքը-
րբում այդ ներկայացումն: Խորհուրդ ենք տալիս
այդ հասակաւոր երիտասարդներին հեռու մնալ
այդ ճանապարհից և չը մտորեցնել մեր մանուկ
սիրունը, իսկ փոքրիկ գիմնապատաններին խորհուրդ
կը տանք պարսպիկ իրանց դասերով և ի գուր ծա-
մանակ չը կորցնել այդպիսի ներկայացումներին
մասնակցելով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Դեպէս ասիլ առաջ լրած էինք, Օսմանեան
կառավարութեան կարին գալէն ի վեր եղած
մարդասպանութիւնը, որով թիւնք, զեկանք
դեռ ևս կը շարունակուին անցեալ մարտ 26-էն
մինչև ապրիլ 13: Գոմաճոր դիւղը Տէր
Թարութիւն քահանայի կըբօր տունը մասն
գողերը և 10 հազար զըշէ ապրանք գողցան:
Վէլի Պապա գիւղէն Թոխեփի որդի Վարուդ
սերմի ցորեն դնելու համար Բիւրաթի գիւղի
կերթայ, յիշեալ գիւղին մէկէն մինչև երեք
ժամ հեռու Ար Բարա Բը Խըզը Տէկրանտ
ըտուած նեղուցը հասածին պէս հրացանով
մեռուցի էին չորս օր վերջը դիակը գտնու-
ցաւ: յիշեալ նեղուցները արդէն երեւել բնա-
կարան մ'է աւազակաց համար, ուր հանդիստ
տարիներ անգամ միշտ կը պատահին գողու-
թիւնք, մարդասպանութիւնք, և շատ անգամ
առաջարկուէր է կարնոյ վըլայեթիւն որ յիշեալ
նեղուցներուն մէջ պահականոց մի շինուի,
քանի չափ զօրք դրուի մէջը և կառավա-
րութիւնն ալ խորհելով պէտքը զգացած է,
բայց չէ գործադրած, մինչև իսկ Պայպիտէն
եկող Բաթան և փողերը շատ անգամ կողպ-
տուած են:

Օրերս այս երեք չորս ամուսայ մէջ պատա-
հած դէպքերուն, մարդասպանութեանց և
այլն վոյ կրկին խնդրագրեր մատուցինք Հա-
սան Ալայի գայմազաքին և նոյնը տեղեկա-
գրեցինք կարնոյ առաջնորդ Գեր. Թարութիւն
Արբալան Արքեպիսկոպոսի: Գայմազաք մեր
խնդրագրերը կարին խաւրց, միւս կողմէն
Գեր. Առաջնորդը մեր տեղեկագրոյն համեմատ
օրինաւոր և ազոտ թաղրի մը գրեց, որուն
համար խորին շտորհակալութիւնն կը յայ-
տնեմք յիշեալ ազգասէր հոյուին որ միշտ
Բասնցուն խնդրերը ջերմ կերպով պաշտպա-
նած է: Դայով կառավարութեան, թէ մեր
խնդրագրերը և թէ թաղրերը նկատողու-
թեան առնելով որոշած է ստօրէնութիւն
մը ընել Վալի փաշային գալէն վերջը...
Տեսնենք և հաւատանք:
Վէլի Պապա գիւղին մօտ տեղի ունեցած
սաստիկ պատերազմին ատեն, անթիւ ցանուած

արտեր, կտորի և առւայտի արտեր բոլորը զոհուեցան, թրխան գիւղն ալ ՚ի միասին: Այն ատեն Վսեմ Ահմէտ Մուխթար և Իսմայլ Հազըր փաշաները ականատես ըլլալով հրամայեցին Վարնոյ կառավարութեան որ քննեն եղած ֆեւանները և հասուցուն: Վարնոն ալ Հասան Վալա հրամայեցին, յատկապէս քննիչ եկաւ. արդէն ունեցած ֆեւանին բաւական չէր, եւրոյ քննիչներուն ալ ծանօթը մեղք հոգայցին. եղած ֆեւանին տաննին մէկը հազըր գրի առաւ որ դեռ ևս չէ գործադրուած. Վսեմ Սանայիլ փաշան իւր բանակով վերջին անգամ Վարնոյն Վարնոյ դարձած միջոցով Վէլի Պապա գիւղի տուրքէն անցնելու ատեն, Տէլի Թէմիր արա ըստուած անձը որ կարնեցի է, բանակէն զատուելով քանի չափ Պաշը պոզուք ձիւսորով գիւղ եկաւ, գիւղի երեսէն կրնէր տեսն մարդ և մէկ քահանայ բանտարկեց, և այնչափ կընտիր Տեմեցի մինչև որ մարմնոյն այլ և այլ տեղերէն արհես վաղց որոց մէկը երեք ամիս վերջը մեռաւ, միացեալներն ալ երեք ամիս հիւանդ էին. անկէ հանեց վեց ձի և քան սայլ որ ալ ետ չը դարձան: Վաղարշապատ, որ Քեօփրիւ թէյոյ ալ կըտուի, հոն գործերը մէկ ջաղացք քանդեցին վառեցին տասը հազար դրոշ արծողութեամբ. ճաճկաց թիւ 92-ի և 93-ի ցորնի և գարի տանորդական սուրբերը Վարս տարին, 93-ին Վարսէն դառնալու ատենին Սողանլուի անտառին մէջ Քիւրտ և չէրքէպ Գոմաճոր և Վէլի Պապա գիւղացոց վրայ յարձակեցան, 17 էգ Գոմաճորէն տարին, 1000 դրոշ վարս և ցորնի հասուցադիր և 24 էգ Վէլի Պապայէն տարին և Վաչարեան Սաւրել անուն երեսուն տարեկան երիտասարդն ալ սպանեցին: Պարսներ, որ յոյն բնակչոք լեռնային գիւղ մ'է մի քանի հարուստ տաճիկ դրացեօք, Վերքեաները հարկուստ ձիւսորով յարձակում ըլին, կին հարս և կոյս աղջիկներ բոլորն ալ իրենց կրից զահելով պղծեցին, ճաճիկ դրացեօք բաւական աշխատեցան չարութեան առաջին առնելու, մինչև իսկ Տեմուեցան, բայց օգուտ չըբաւ:

Տօտի գիւղը Պոյաճեան Նոյալի Քէհեան որ Բասէնի մէջ երեսէն տուն մ'է քանիցս անգամ Վերքեաները ասոնց տունը եկան, և յիւշեպ Նոյալի և Սոնփանին այնպիսի սարսափելի անձնաքններ տուին որ գրել անգամ արժան չեմ գտիր. ութ ամիս հիւանդ էին, հազըր մահուանէ ազատեցան, 14 ընտիր եղբեր և բաւական ոսկի արծաթ թալիքով զաւցին:

Սղաքաք Էրէնափ, գիտեմ պիտի մեղադրէք մեզ զբանա օրինաց հակառակ անկարգ և խառնամթիւթոր ըլլալուն համար մեր տեղեկագիրը, բայց այս մասին յատկապէս Ձեր և ընթերցողաց ներողութիւնը կը խնդրեմ, որպէս զի մեք Բասէնցիք Վաղարշի նման նոր կեանք ստացած ենք, երանելոյն Յորի նրման անթիւ վերքերէ նոր բուժուած ենք. փոխանակ մեզի նիւթ ապէս և բարոյապէս օգնելու, հոգայտու, խնամելու, նորանոր վերքեր, հարստահարութիւններ անձրեկի նման մեր վրայ իջնել տեսնելով, բոլորովին կորուսած ենք մեր միտք ու զգացմունքը: Այստեղ ներուրի մեզ ըսել որ ազգային կենդանական վարչութիւն մէկ բանի պարտաւանջ գտնուեցաւ. այն էր պատերազմին սկիզբէն, կամ Պոլսէն յատկապէս քննիչներ խաբէր պատերազմի դաշտերը գտնուելու, և կամ վիճակաց Գեր. առաջնորդներուն հրահանգ տար որ պատահունքները ամեն իր օրին տեղեկագրէին. մեք այժմ եղածին տասին մէկ հազըր կըլեմք: Յիւրախ երկոյ ճանապարհորդներէն կիսանամբ որ անձուէր Պատրիարք հայրենիս բուն իսկ Մեծն Ներսէսի շաւղին հետեւելով արտատախտան կը բողբէ զառաւարտակ Հայոց վիճակին համար, որուն բոլոր Հայեր երախտապարտ ենք. և որչափ շնորհակալ ըլլամք թիչ է: Յիւրախ ունիմք հայրենասէր Խրիմեան Հայրիկ մը, որ յանձն առաւ տառապիտակ Հայ

ոց վիճակ ներկայացուց և բարոյական մեծ տէրութեանց արդարադատ ատենին, որոյ յիշատակը ոսկի տուներով անջնջելի դրոշմած ենք մեր սրտի խորքերը: Բայց ունիմք ասոնց հակառակ այնպիսի առաջնորդներ ալ, որ փոխանակ իրենց վիճակին ցաւերը ճշդիւ տեղեկագրելու առ կառավարութիւնն և առ ազգային կենտրոնական վարչութիւնն, մէկուն բողբածը միւսը կը ստէ կառավարութեան ատենին մէջ ի վնաս և ի կորուստ ազգին: Ահ զորապէս կըլեմք որ դեռ ևս չի պակսեցան ամբողջ վիճակի ժողովուրդէն իրենց անձնական կրից զոհող հովիւներ և հովուապետներ:

Կը խնդրեմք որ բարեհաճ ձեր ազգային կենտրոնական վարչութիւնը գոնէ երեք տարին մէկ անգամ ազգի կողմէն յատկապէս քննիչներ խաբէր, զառաւարտակ Հայոց վիճակը, վանքերուն վիճակը, դարոցաց և եկեղեցեաց վիճակը, քահանայից, առաջնորդաց վիճակը, երկրագործ ժողովուրդեան նիւթական և բարոյական վիճակները քննելու և դարձնելու համար:

Բասէնցիքս այսօր ազգային քննիչ մը պէտք կը զգամք. կարելի է որ ազգային կենտրոնական վարչութիւնն այսպէս անօրէնութիւն մը միտք ըրած ունի, բայց քննիչներուն բաւական ծախքի կարօտ ըլլալը կը մտածէ, և իրօք ալ մտածելու չափ կայ. բայց սա ևս գիտեալու է որ եթէ քննիչի մը համար տասը հազար դրոշ ծախք ընելը չուզէ, այն վիճակը որ պիտի քննութիւն առնէր, տարին հարիւր հազար դրոշ կը կորուսնայ, և այս կորուստին իրաւ ըլլալը տեղեկու համար կը խոստանամ ուրիշ անգամ բացատրել:

ՆԱՄԱԿ ԹԻՒՌՔԻԱՅԻՑ

Կ. Պօլս, 6 մայիս

Ազգային քաղաքականութեան կողմնացողը զէպի Ռուսիա կը հանի, մեր Պատրիարքը կը դոճանայ միայն պ. քաղաքագրի միջնորդութեամբ բարի զարուստ մտքով անգղիական դեսպանին, ցաւ յայտնելով թէ հիւանդութիւնը չը ներքէ անձաբ կատարել իւր պարտականութիւնը, սակայն երեք օր վերջ Նորին Արքայապետութեան պաշտօնապէս սցեղութիւն կերպի առ իշխան Վոյաճօֆ:

Դիտելով թէ Պատրիարքարան շատ դառնացած է Վէյադի և Սոյապուրի վերջին ատենախօսութիւններէ. մեք ցաւելով հանդերձ որ այս քաղաքագէտներն Պուլիարտանի վերջի զէպերէ չեն օգտուիր և թրքաց նկատմամբ չոյնչ կը մտնան, ոչինչ կուտանին, սակայն և այնպէս կը հարցնենք արդեօք շատ քաղաքագիտական գործ մը արած պիտի լինիք եթէ բուրովին ցրտացնենք Անգլիոյ դեսպանատան և Պատրիարքարանի յարաբերութիւններն:

Արդէն Բ. Գրան նկատմամբ մեր ընթացքը բարեկամական լինելէ շատ հեռի է և թուի թէ հետզհետէ անախտ պարագայներ պիտի պատահին, որք զնպաստաց միջամտութիւնը անհրաժեշտ պիտի ընծային: Այս պարագայներէն մին կրնաք նկատել Ֆրանսիոյ վանահայր Նիկողոս եպիսկոպոսի խնդրէն: Նախորդ նամակաւ այս զէպերն վրայ բաւական խօսեցանք, յայտնելով միանգամայն թէ ինչ պայմաններով Պատրիարքարանը կը հաճի այդ զէպ-թոնցիներն յանձնել կառավարութեան. Բ. Գուռը ասանց այդ պայմաններէն մին ընդունելու պարագայէն վանահայրն և ընկերն իրեն յանձնել կը պահանջէ. Պատրիարքարանն ալ «ոչ կարելի» կը պատասխանէ: Երկու կողմէն այն ատենան ստացած են որ կը վախճուի թէ Բ. Գուռը համարակի մինչև իսկ Պատրիարքարանն կոխել և յեղափոխականներն յափշտակել: Ալ կրնաք երեսակել թէ այսպիսի ցաւալի զէպ մը երբ տեղի ունենայ, ինչ կըլայ Կ. Պօլսոյ յուզումը:

Ազգ. վարչութիւնը դեռ խոնձուրթեամբ կը շարժի և կը կարծի, որ ճարտարութիւն մը արած պիտի լինի եթէ այս ատիւն կարենայ Պատրիարքարան փոխանորդութեան պաշտօնը դրան կողմէ վաւերացնել տայ, ուստի այս օրերս կը հաղորդէ կառավարութեան որ զէպ-թոնցի բանապահանջներու նկատմամբ վերջնական պատասխան մը չը կրնար տալ մինչև որ իզմիլներն սրբազանը Բ. Գուռն կողմէ չը ճանաչուի, զի նա միջնորդ պիտի

լինի Պատրիարքարանի և Բ. Գրան յարաբերութեանց: Մեծ-վեզիրի փոխանորդն պատասխանած է թէ այդ խնդիրն սակաւին իւր լուծումը չը գտաւ նախարարաց խորհրդին մէջ, սակայն քիչ օրէն պատասխանը կը տրուի:

Եթէ կառավարութիւնը այդ խնդրոյն լուծում չը տուաւ, հարկ է խոստովանել որ մեր մէջն ալ փոխանորդութեան հակառակ խօսողներ պակաս չեն և տանը կը կարծեն թէ փոխանորդ մը կարող պիտի չը լինի խօսել և գործել այն ազդեցութեամբ զոր կուտանայ Պատրիարք մը: Բայց ինչ անկեր, հարկն է որ զմեզ կը ստիպէ այս միջոցին դիմել: Պատրիարքն կը հրաժարի, ազգն այս հրաժարակալը չընդունէր, և մինչ այս խնդրով կը զբաղինք, միւս կողմէ այնքան կարևոր գործեր կան, զոր անհնար է երեսի վրայ թողուլ, և այդ գործերն եթէ յաջողութիւն գտնեն այն ատեն միայն Պատրիարքն իւր պաշտօնն կարող պիտի լինի չարունակել: Այդ գործերուն զխաւարն կրնաք նկատել Հայաստանի բարեկարգութեան հարցին: Յանձնաժողովներն, որ այդ բարեկարգութիւններն ի գործ դնելու պաշտօն ստանձնած են, այդէն աշխատութեան ձեռնարկած են: Մեր թերթին նոցա այցելութեանց վրայ մի քանի տեղեկութիւններ կը հաղորդեն: Մասին յորդր կը կարգայ ժողովուրդին որ առանց երկիւղի ամեն ինչ պարզեն Յանձնաժողովն առաջ: Խորհրդարանական Յանձնախումբը ազդու գրեր կը գրէ առաջնորդաց ու յատուկ պատուէրակներ կը իրիէ ողակէ զի ժողովուրդը չը թուպանայ: Սակայն մեք այս բարեկարգութեանց վրայ կը զարմանամք, և շատ արդար կը գտնենք Պատրիարք սրբազանը որ ոչինչ կը յուսայ: Արդար Բ. Գուռը ինչ ոգով չարժած կարգեց այս յանձնաժողովներն, միթէ բարեկարգութիւն անելու համար, այն ատեն հարկ էր որ հոս պատրաստէին, ինչպէս որ մեք կը պահանջէնք, այդ բարեկարգութեանց ծրագիրն և յանձնախումբներն զանոնք ի գործ դնելու պաշտօն ունենային. բայց այսպիսի բան մը չը կայ: Յանձնաժողովն անդամներն հայոց վիճակն պիտի ընդունեն, բայց միթէ իրենց գիտեր մեր տառապանքներն, չեն գիտեր իրենց վարչութեան որչափ վատ լինին: Եթէ ուղղութեամբ կը գործեն էր չուզէին հայոց փափագած անձներն անդամներ Յանձնաժողովն: Էր մերժեցին Սոնփան-Քաչա. ժամանակ վատակել, զվարդա խաբել ահա թրքաց սկզբունքն, զոր յայտնի կանեն ամեն պարագայի մէջ:—Նոյն կողմից իշխանի թերթին, զարմանք կը յայտնէ թէ ամբողջ Բերլինի դաշնագրի 61-ին յօդուածն այնքան ստիպողականութիւն կուտայ Հայաստանի բարեկարգութեանց խնդրոյն, մինչև կատէ թէ առանց այլ և ոչ է յայտարարուած և այս բառերն չէ գործածած ուրիշ ոչ մի յօդուածի մէջ, տակաւին այս 61-ին յօդուածն մեռեալ տառ մնացեր է: Մեք այս խոստովանելն, այս յանձնաժողովներն չեմ կրնար հաշտեցնել Բերլինի դաշնագրի պաշտպան Սալիպարի խօսքերուն հետ: Ազնուական յորդը առանց կարելու կը յայտարարէ թէ հայերն այն ատեն միայն բարեկարգութեան երես պիտի տեսնեն, երբ թրքաց զանապէս վիճակն ալ բարեկարգուի: Թրքաց համար զանապէս բարեկարգութիւն. բայց չեն գիտեր որ այդ բառն համարի է pierre philosophale բառի: Առեն մը երբ ճանկատանի բաղդի Ֆուսաւ, Ալի-բաշայներուն յանձնուած էր, երբ այդ երկիրն իրեն ջերմ պաշտպան ունէր Ֆրանսա և Անգլիա, երբ իւր վարչին և բարոյական հրապարակներու վրայ մեծ էր, երբ խոր խաղաղութիւն մը կը սրբէր և ահարկու պատերազմ մը զգին, չէր յօշոտած այն ատեն զանոնք մեծ փոխառութիւններ արաւ. իւր դրամական դրութիւնը որ խիտտ այլանոց էր և է. բարաբեկու պէտք կար և զանազան տեսակ զբաններն ի մի ձուլուէն էին. այդ դրամներն որ ինքնուրոյ, մէթալիկ, մանր մէճիտ, և այլն անոններն կը կրնէ զանազան խիտտ մեծամեծ վնասներ կը պատճառեն, 3 կամ 4 միլիոն վրայ բաւական էին զանոնք հրապարակէն վերցնելով կառավարութեան հաւաքած սուղերն աւելի արդեւաւոր անելու, և սակայն կառավարութիւնը չը յաջողեցաւ այս տարրական բարեկարգութիւնն իսկ անել. և այժմ այս զանազան վիճակն մէջ կը կարծեն որ Թուրքիա կարող լինի բարեկարգող և յաջող գտած մը ունենալ: Սալիպարի կատէ թէ փող պէտք է լաւ ոստիկանութիւն կազմելու համար, և հոս «Levant Herald» զարմանք կը յայտնէ թէ երկար ատենէ նոր ոստիկանութեան ծրագիրն պատրաստուած է և գործադրութիւնը անպայման կերպով յետագուած:

Բայց կան այնպիսի կարգադրութիւններ ալ որ առանց մեծ գումարի ի ձեռք բերել հնար է. ինչպէս է լաւ կառավարիչ մը եթէ զիպուածով դռնուր, զայն իր պաշտօնի դրուին պահել: Հալէպի կառավարիչ կարգեցին Ղալպա-Քաչա. իրենք թիրաքներն կատէին թէ այս մարդն ընտիր մարդ մ'է և Կ. Պօլսոյ թերթներն դրամատնօք խօսեցան. այս

պաշտօնեայն Յանձնաժողովն հետ մեկնեցաւ և մինչ կը սպասէինք իւր գործերն տեսնել և ճանապարհ տեսնել կրնանալք որ Կ. Պօլսոյ պիտի վերադառնայ քաղաքագետ լինելու համար: Ալ եթէ կրնան տաճկաց գործերուն խելք հասցուր:

Բայց տաճկաց գործերուն միայն չէ որ խելք հասցնելու դժուարութիւն կը կրնէք, մեր մէջն ալ արդաւոց շէշպեր պակաս չեն, որոյ իւր օրինակ մը կրնաք համարել Ռուբինեան Արքեպիսոս վարչապետն գտած ընդունելութիւնը ի Տիփոն: Մեք ժամանակաւ «Մշակ» մէջ տասցինք թէ ինչպէս տարրինակ կը թուի մեզ որ վարչապետ մը և ստակ հաւաքէ ի Ռուսաստան վճարելու համար այն պարագան զոր արած է դարձող մը համար, որոյ մէջ առանց փողի աշակերտ չէր ընդունէր: «Մասիս» պէտք եղածն զրոյց այս մասին, չեմք գիտեր կարգացնել թէ ոչ. Բայց և այնպէս քիչ շատ դիւք քաջապետու կարծիքն կը յայտնէինք: Այժմ մեծ եղաւ դարմանքիս կը «Մշակ» մէջ աթօ. վարչապետ մի նամակն տեսանք, որով կը հրաւիրէր Ռուսիոյ հայ ժողովուրդն Վարնոյ մէջ երկրագործական վարժարան մը բանալ Ռուսիոյ և Կ. Պօլսոյ միջև: Կարծեմք թէ այդ մեծ նամակի իմաստն այս տողի մէջ կը պարունակուի: Այս նամակի վրայ քիչ մը մը խօսելու պէտք կայ:

Աթօ. վարչապետն այնպիսի արիւթի ազգիս բառը գործածած է, որչափ երբէք չեն գործածած այնքան ընկերութիւններն որք իրականապէս մինչև ցարդ Հայաստանի դաստիարակութեանը աշխատած են. —քիչ շատ կերծարութիւնն կը հոտի:

Աթորսիսու վարչապետ կատէ թէ իւր պիտի լինի կը նուիրէ Կ. Պօլսոյ այն չէքն որ իւր սեփականութիւնն է և տանն հազար մանէթ արծողութիւն ունի, և որոս փոխարեն փողբիլ պարտք մը միայն կայ: Հետաքրքիր եղանք այդ չէքն տեսնելու, գաղցնք Բերայի մէկ ծայրն թանկութի թագին, արհեստէ հասկացող մարդերու հետ. փայտաչէն տուն մ'է որ առ առաւելն այսօր չտես հարկու լիւր կանէ, այսինքն երեք հազար ութ հարիւր մարդ, և արդէն սակէ պակաս գնով վարդապետին սարանք եղած է:—Արդ կը հարցնենք ինչ պատճառաւ է որ այս կերպով ստու կը խօսեք, միթէ ներքի է որ այսպէս ազգը խաբէ: Գետոյ ինչ է իւր պարտքը—թուի թէ փողբիլ գումար մը չէ. այնպէս որ եթէ ժողովուրդը այդ պատքն վարժարում տունն ստանայ աւելի կորուստ ըրած պիտի լինի: Հետեւաբար Աթորսիսու վարդապետն չէ կարող պարծենալ թէ ազգին մեծ նուէր մը կանէ. Ռուսի ըստ մեզ տարրինակ պահանջում մը կանէ երբ կուզէ որ կարնոյ երկրագործական վարժարանը «Ռուբինեան» անուամբ միտուի:

Կերկի թէ արծ. վարչապետն Կ. Պօլսոյ մէջ այդ երկրագործական վարժարանի գաղափարն իւր զարմուրթ ծածակել պահած է. զանազան չեմք գիտեր, միթէ լաւագոյն չէր լինէր որ հոս պէտք եղած կարգադրութիւններն անելէ յետոյ բարի վիշականաւ մը ներկայանար Ռուսիոյ հայոց և նոցա համարունն գրաւէր, բայց վարչապետն քաջ գիտէր որ Կ. Պօլսոյ հայք վինքն լաւ կը ճանաչեն:

Արդէն երկրագործական վարժարան բանալու գաղափարն Կ. Պօլսոյ հայոց մէջ ընդունելութիւնն չէ գտած, մեք կը մտածենք որ Հայաստանի ժողովուրդը այսօր աւելի կարօտ է նախակրթարաններ քան թէ երկրագործական վարժարաններու. տարբարող ժողովուրդ, որ արդէն իւր առաջ բերած ցորնը չը գիտէր ինչ անել, առանց փոխադրութեան միջոցներու, առանց ու և է ապահովութեան. բարեկարգական ընկերութիւնը որ նպատակ ունի երկրագործութեան ուսումնն զարգացնել, այսօր լաւ համարած է որ նախ գիւղացոց կրթութեանն աշխատ և ապա երկրագործութեան, այս պատճառաւ տարեկան գումար մը յատկացուց Վարդապետն որ Վասպուրականի մէկ գիւղն նախակրթարան մը բանալ:

Ինչ և իցէ շատ երկար վիճաբանութեանց թեքն տեղի տայ այս խնդիրն: Գուր Ռուսիոյ Հայք եթէ կուզէք անպատճառ Հայաստանի մէջ երկրագործական վարժարան մը ինչեւ, արդեւ մը չուրիք կանոնաւոր ընկերութիւն մը կազմելով այդ գաղափարն ի գործ դնել, մեք մը այն ժամանակ կազմակերպ ձեռք և միայն լաւ գործ մը կը տեսնենք, վասն զի եթէ դուք ուղէք այսպիսի գործ մը անել, մեր կարծիքներն կը գոհեմք և ձեռք հետ կաշխատինք: Սակայն ելլել այսպիսի կարեօր ձեռնարկութիւն մը Աթորսիսու վարչապետի յանձնել մեզ շատ տարրինակ կը թուի:

Բայց եթէ շատ կորուստէր էք և վարչապետ մը կուզէք ձեռ գործող ի դուրս, ո՞վ կրնալու զնկը Սրբանաճատեանցի պէս հայ ազգի մէջն վաշխելու և Հայաստանը ճանաչող վարդապետ մը ընտրել:

Մեք Աթորսիսու վարչապետի անձնականի զէպն և է դիտողութիւնն չեմք ուզեր անել, իրաւ կը

Կարգադրելու որ վերահաս շարքապետը փոխարինակ զմա շնորհի վրայ մը վանքի մէկ անկիւնը ապախարհայնաց կնիքներէն և այնու վ. Պօլսոյ հասարակական գործընթացի կը պատճառէր, բայց քիչ կարեւոր անկ հրահանգ շարքապետին էր— կարծեմ որ Ռուսիայ հայք աւելի ազատ զըստնոսն, և եթէ չեն ուզեր ինչ որ ալ լինի Ռուսիոյ մարդկային իրաւունքի անհոգի անգամ մը Կ. Պօլսոյ պէտք եղած ապահովութիւններն ստանալու կը ձեռնարկեն։

Քանի որ խօսքն կրեականաց վրայ է, չը մտահարե սակ թէ կարծես որ մենք թիչ աւարկայ ունեմք մտածելու և մի՞նչու, դուք ալ մեզ Սրբազան մը նուէր կանէք, և «Մշակ» ալ գծտութեան խնամքն կը դրուէ ու մէկ կողմ կելլէ։ Երկուքն ալ զարգացող երկրակողարի նկատմամբ է. Սրբազանը մի քանի ամիս առաջ Կ. Պօլսոյ էր, զիսց Պրուսա, այժմ վերադարձաւ և Մարմարայի գատը դիւն կը հանգչի։ Այս միջոցն «Մշակ» թիւերն կը համարէ յորում լուր կայ թէ սրբազանը 10,000 մանկէ թերած է Կ. Պօլսոյ ոչ թէ «Արտաբարտեմ» նուիրելու, այլ Պատրիարքութեան անթուան ձեռք սնցնելու դիտարկութեամբ։ «Մանր» զայս կարտապէ, «Վրացի» այնպէս մը կը ձեռնարկէ թէ «Մատի» իւր կողմէ կը չինէ այս լուրն. «Մատի» կը պատասխանէ, Սրբազան նամակ մը կը հրատարակէ երէկ լրացող մէջ, որոյ պատասխան անուշտ վաղն «Մատի» կուտայ։

Մէք չեմք կարծիք որ Սրբազանը զէ՛ք ներկայիս համար այսպիսի գաղափար մը գործարարութիւնը տանել յուսայ. Ներքեւ Սրբազան հաստատ է իւր գահուն վրայ, ժողովուրդն ի նոսնակ բաժանել չուզէր, բայց եթէ վերաբարձով Ներքեւ հրաժարի, ընտրելիներն արդէն պարտաւ են. Իզմիրեան Մատթէոս, Մուրատեան Մեկսիսիդէ, Աշգեան Իսրէն, անս մեր պատրիարքոցներն բաց աստի միջով կը կարծէ որ 10,000 մանկէ թով վաճարմ սրբազան հայ ազգի երեւոյթութեան պիտի որայ, ծիծաղելի գաղափար։ Վաճարմ սրբազան կրնայ վտաս լինել որ եթէ անձնական մեծ արժանքը մը ցոյց տայ թերես այդ աթոռն որ մը իրեն պարտի, բայց փողով, բնաւ։ Հասարակաց կարծիք մը կայ որ խափն կը հսկէ պատրիարքներու վրայ և ինքն իսկ յորմանն այս հասարակաց կարծեաց առաջ Պատրիարքական աթոռն կը թողու։ Արն պատճառներն են և դեռ ուրիշներ զոր կրկար կրկայ հոս թուով մեզ կենթադրել կուտան որ վաճարմ սրբազան երբէք այդպիսի գաղափար մը ունեցած չէ, սակայն իւր ներկայութիւնն ի Կ. Պօլսոյ անուշտ դիտարկութեան մը արդիւնք է, զոր չեմք դիտել։

Սրբազանը նամակն մը ինքզինքն կարգարացնէ, այդ իւր իրաւունքն է. բայց ո՞՞ մը կը գործածէ որ մեզ անհանդէ է և երկիրկողար մը անվայել օրինակ ինն. «Մատի» խնայելի կամբարտանք իւր կրկին անգամ բաժանորդացին սրահանդող. այս գրագրութիւնը պատիւ չը բերէր սրբազանին. նոյնպէս այն գուհիիկ ըսցարարութիւններ գործարար կայն մի քանի լրագրողը միտնաց բերաններ թէք ան լինելով իրարմէ կը փոխանակեն գրագրութիւնը և այնու. Անուշտ Սրբազանը պէտք է Կ. Պօլսոյ ժողովուրդի գրական ճաշակն յարգէ, և այնպէս գրէ. մի գուցէ մեզ կեթաղը տայ որ Աշգեանաց վանուց մէջ այնպէս գրելու և խօսելու վարժութիւնն ունեցած ըլլան։

Այս վէճերն այնքան սաստիկութիւն չունին որչափ որ ունին մեր Հատմանական կողարց ներքին երկպառակութիւններն. սակայն մեր արդէն այնպիսի դրագրում ունեմք որ կարող չեմք նոյն խնայելիներու համար ժամանակ սպառել։ Արդէն ձեզ գրած հիմ որ ինչ քաղաքական տեսակէտներն են որ այս հարցին աւելի մեզ մտաստանողներն կը դիտենաւեն, կը սպասեմ որ որ մը այս հաստման և հակահաստման վէճն վախճան գտնէ և այն ժամանակ տեսներ ինչ նոր հանդէս տեղի պիտի ունենայ, սակայն սա ևս ասկղու է որ հակահաստման մասն, որ է պիտասիտ կաթիլիութիւնը չը դարձնէր ի մէջն այն համակրութիւնը յոր իրաւունք ունի, թող գարմանայի երկուք մը չը համարուի. երբ հաստմանն և հակահաստմանն վէճն սաստկապէս կը յուզուէր, մեզմէ շատերն կը կարծէին որ պիտասիտ մասն Հարատմանաց եկեղեցայ դիւն պիտի վերադառնայ. տարիներն կանցնեն և այս դարձը բնաւ տեղի չունենար. մերմանքն կը դարմանն և կանն, ինչ փոյթ մեզ ձեռ կրնուգակ ինդիւրներն և ստացուածը վերաբերեալ հարցերն. դուք հակահաստմանը մեր կեկղեցին այնպէս մարդեայ կը գտնէք. ինչպէս հաստմաններն. ուրեմն ինչ է ձեր առաւելութիւն. գէթ այս վերջիններն առանց ծանոթութեան ճանապարհներու դիմելու մեզ անկեղծօրէն կանն թէ՛ գրուք յաւիտան կարուսեայ էք, եթէ դուք այսպէս չէք հաստարար ուրեմն վերադարձէք առ մեր։

Կը ցարկըր ասկ որ Կ. Պօլսոյ հայաց սուտար

մեծամտութիւնն այսպէս վրայ կը մտածէ. բայց վերաբանութիւնն մը կայ որ եթէ նշանաւոր չէք քանակի կողմէ որակի մասին ընտրեալ է, և նա լուրարովն տարրեր կը մտածէ։ Երգել խոցի ազատութիւն և այդ ազատութիւնը հայտնցնել ազգային զգացմանց հետ, ա՛նա նոյն սկզբունքն։

Ամէն աստի որ Հատմանական հայց եկեղեցին կը մտնեմք տխուր խոցեր զմեզ կը պաշարեն և զայրոյթ մը կը զգար, երբ կը լսեմք որ այնքան յարգանք կը հնչին օտար անուն մը, որ մեր կողմայիններն կը նոյնէ և կարհամարհէ. իւր հայ կը կշտանամք և ինքզին կանեմք ինչ մեծ գործութիւն կը տիրէ սոցայ խոցի վրայ, որ արհամարհանայ առջև անձնական ամեն արժանապատուութիւն մտացնել կուտայ, բուսն գործութիւնը կը գրկեն այն կեկղեցին որ զիրենք կը վախէ։

Ի՞նչ ալ մտածեմք, որչափ ալ զայրանամք այդ գործութիւնը կայ և պիտի մնայ, նորա դէմ մարտնչին յիմարութիւն է. ուրեմն մեր կեկղեցին բաժանեալ հայոց կրօնական խիղճն յարգեմք և մեր ջանքն լինի որ նոցա սիրան հայրենասիրական զգացումներով վառ մնայ։ Արդ հակահաստմանց մասն է որ մեր փառաբանաց կը հաստատարար լսանէ, և եթէ բոլոր հատմանականներ նոյն պէս լինին, դժգոհութեան պատճառ չը պիտի ունենամք։ Ուստի փառաբանել է որ հակահաստման մասն ոչ թէ առ մեզ վերադառնայ, ալ կաթիլի մնալով միւս կուսակցութիւնն ալ յուրորութիւն ամէ իւր օրինակովն և աշխատութեամբն։

Հակահաստմանց ինդիւն կրնայ մեր ազգային դատին նոյնատեսակաց լինել եթէ օգտիլ գիտնամք։ Հակահաստմանը իրենց առանձին Պատրիարք մը ունենալէ յուսահատելով որք մը փառաբանեցան որ միտն քաղաքական գործոց մասին մեր Պատրիարքարարի իշխանութեան ներքե լինեն, որչափ օգտակար պիտի ըլլայ մեզ եթէ այդ վաւար մասն որ մը իրականութիւնն ըլլայ։ Եստեան կուսարկին, և իրաւամբ իսկ թէ մեծամեծ դժուարութեանց տեղի կուտայ այսպիսի առաջարկութիւն մը եթէ ընդունուի, սակայն կը պատասխանեմք, պէտք է ամեն երկրորդական ինդիւնը այժմ աչքէ հեռացնել և մէկ կէտ նպատակի միտն ունենալ. Արդ ինքնաբարութիւնն արդ մեր ամեն գործերն որ կը ներկայ գտնի այդ ինքնաբարութիւնն բայց մը առնել տայ մեզ. ընդունելի պէտք է լինել ի մէջն. եթէ այսօր մեր կարենամք Ներքայի ցոյց տալ թէպէտ մեր ազգային իշխանութիւնը կրօնաւորաց ձեռք է բաց և այնպէս մեր կը յարգեմք մեզմէ ասարեք դաստնութիւնն ունեցող կողարց խիղճն, բաւական կարևոր գործ մը կատարած պիտի լինիք։ Եթէ բողոքական և հատմանական հայք քաղաքական կապերով մեզ հետ կապուեն որ մը, ինքնաբարութեան ինդիւնն ժամուռն մեծ խնդիր մը արդէն լուծուած պիտի գտնեմք. նա մեծանաղ մասնախմբական հայերն իսկ մեզ դրաւելու դիւրութիւն պիտի կարենանք ունենալ. Վանն բողոքական հայոց կողմ ևս առաջարկութիւն մը կայ որ կը տանէք «Մատի» մէջ հրատարակուած նամակն մը մէջ։

Գիտնալու էք որ հաստմանք և հակահաստմանք իրենց մէջ բաժանուցիներ ունեն, հաստմանց մէջն ալ նոր արդատական մաս մը ծնունդ կանոնու. Հակահաստմանը ծանուցողը մը յանձնած էին Եւրօպական դեպիտաց. Հայ-կաթիլի հասարակութեան տարադրութեամբ այսօր մաս մը հակահաստմանը կը բողոքին հրատարակու. այդ ծանուցողի դէմ, յարտարարի թէ յանուն հայ-կաթիլի հասարակութեան ոչ ոք իրաւունք ունի խօսելու առանց յայտնի նոյն հաստմութիւնն առան լինելու. — Հաստմանը ևս կը բողոքեն այս պրոն դէմ։

Եթէ արգային քաղաքական ինդիւններն այսքան կիմրանք կը պարտականի, ազգային գրական հարցերն աւելի պարզ կերպարանք մը կը ստանան և գրական նոր կեանքի մը երկոյթներն կը նշանաւորուին. յուսամք թէ գրական այս նոր կեանքի մէջ նշանաւոր դեր մը կատարէ այն ընկերութիւնը որոյ անունն լսեցինք և որոնք տեսնար միանգամայն, այդ ընկերութիւնն է «Գրական միութիւն», դա կապուած է Կ. Պօլսոյ մէջ լոյի միջիկ. նպատակ ունի ազգային մատենագրութեան օգտելը իւր առաջին գործն կը հրատարակէ «Թէ որ առաջնացնելու աղջիկ մը ունենայի» և ինչպէս Արդէն արդէն յարգելու է ընկերութիւնը իւր Ա. գործին յառաջարկին մէջ ալ խօսքերը կատէ «Եթէ առ նաւարց ժողովրդեան շորս մասին մէկը իւր վրայ պարտը դնէ նոր հրատարակութիւններն մէկ մէկ օրինակ առնուլ. — մնայեալ երեք մասը գլխաւորաբար գաւառացին ճիշտարար պիտի կարգայ։ Մէք այս ընկերութիւնը պիտի քաջաբերեմք, դուք ալ անուշտ ձեր աշակերտիւնը չէք զմայար. կը ցուեն որ ժամանակ չը ներէր այժմ այս ընկերութեան և իւր գործին վրայ կրկար խօսել. «Մշակ» կր խմբարարութիւնը այսօր կրկուսն գրէն մէկ

օրինակ, իւր գրական աշխատակիցներն թող գրեն եթէ հանց լինի իրենց. նոյնպէս թիչ աստեղն պիտի ընդունենք ուրիշ կարևոր գործոց մը յայտարարելու, այդ մի բաղդը է զոր կը յօրինէ Նորայր Բեգլարաջի. այդ բաղդըն հայ լեզուի մէջ մեծ պայքարներն և ինքնաբարութեանց դուռ պիտի բանայ. հայ լեզու սիրողներն շատ գո՛ւ պիտի լինեն, և երկնակն 15 տարի է անդինաւ կատարուի. իւր ունեցած բնագրական հմտութիւնը գրական մէջ որ բաղդըն կատարեալ գործ մը պիտի լինի. Լիթիլթէլ գրութեան հետեւ է։ Արդէն մեծ անուն Ֆրանսային իւր բաղդըն յաւելուածի մէջ կը գրէ թէ մի հայ, Նորայր Բեգլարաջի գտած է և իրեն հարողաճ Ֆրանսերէն ինն բառերու ծագումն, զոր ինքն ևս կրկուսնի։

Յ. Գ. Մ. Նախորդ նամակի մէջ Ս. պատրիարքի մատուցած պատարագի աւելի միայն 3000 թուր ծախք եղած է գրած էի սխալմամբ 300 թուր տպած էք, որ բարձրին նշանակութիւնը կը փոխէ։

Մեզ կը հարցուն թէ հեռարատան և թղթատարութեանց օրացունները պիտի յանձնուի մի հայու, կուտանող բաշար. յարգելի և հարկնաւոր անձ մը, երբեմն փոխ-կատարող Պօսիարի։

Հայկակ

ՀՈՍՄ, 1830 մայիսի։ «Avenir» լրագիրը հարգուած է, որ Զուհեբերան դիմել է Ռուսաստանին, Աւստրիային, Բէրլինին և Շոտլանդիային առաջարկելով օտար պետութիւններին ներկայացուցիչներին մի կարհուր կազմել, քննելու այնպիսի քաղաքական և առևտրական միջոցներ, որոնք կարողանային հարուած տայ այն հացի թանգութեանը որը սպաւում է գերմանական նոր մարային վերանորոգութեան ցուցակից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 17 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 97 ր. 37 կ., երրորդ 96 ր. 50 կ., երրորդ 96 ր. 25 կ., չորրորդ 96 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ 243 ր., երրորդ 238 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 94 ր. 75 կ., երրորդ 95 ր. 12 կ., ոսկի 8 ր. 57 կ.։ Ռուսաց 1 թուր 1 օնցի վրա արժէ 23, 31 պէս. Ռուսաց 100 թուր Գերմանիայի վրա արժէ 199 մարկ, 75 պէս, Փարիզի վրա 245 Ֆր. 75 անսիմ։ Տրամագրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 19 մայիսի։ Իշխանուհի Նինա Նիկոլայեւնա Խուսովայի օժիտը հասնում է մինչև 30 միլիոն։ «Правит. Вѣстн.» լրագիրը հարգուած է, որ Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովայի առողջութիւնը լաւանում է։

Ֆեյ, 1931 մայիսի։ Նրէկ այստեղ կարգացիցան սուլթանի այն Ֆիրմանները որոնց գորութեամբ Ալեկօ-փաշայն զենեղաւնահանդապետ է նշանակուած, և օրդանական կանոնադրութիւնն էլ հաստատութիւն է ստանում, դրանից յետոյ կարգացիցան Ալեկօ-փաշայի յայտարարութիւնը. երկրաւտե յուզումներն պատճառով թիւրքաց զրօշակ չը բարձրացրին։ Ալեկօ-փաշայի յայտարարութեանը արմալի բացականչութիւններով պատասխանեցին. յոյները բողոքեցին բոլորական Ֆիրմանների բովանդակութեան դէմ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 20 մայիսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հարգուած է, թէ Կայսրը հրամայեց 300 միլիոնի 5% ներքին փոխառութիւն անել, անուանելով նրան արևելեան երրորդ փոխառութիւն 100 և 1,000 թուր օրիգացիաներով։ Պրօքէստները վճարվում են վեց ամից յետոյ, սկսելով յունվարի 1-ից

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆ

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ

ՊԵՏՐՈՎ, 17 մայիսի։ Նրէկ մի սաստիկ քամու ժամանակ, այրվեցաւ Չխտակովի գաւառի Մուտովի պատարը (Ղ) 100 տներ գոհ գեացին հրեհին։

ՓԱՐՎ, 1729 մայիսի։ Ատրանտան և Մեծ ովկանտանների միացնելու հարցի մասին 74 ձայներն աւտելութեամբ 8-ի դէմ, վճռվեցաւ Վիսի-Նէկլիւի և Ֆիւրրա զենեղալ ծրարարին համեմատ փորել Պանամայի պարանոցը Լիմանի ծոցի և Պանամայի ուղղութեամբ։

Ֆեյ, 1930 մայիսի։ Նրէկ Սուոլի պին, հիւպատոսներին մնաս բարով ասելով, յայտնեց, որ բոլոր բոլորական աստիճանաւորները նշանակված են ժամանակաւորապէս, իսկ նրանց հաստատութիւնն իրանց պաշտօնների մէջ յետոյ կը լինի։ Սուոլիպին ուղերովից գէպի Սլիվանօ, ուր կանգնած է զլիւսար բանակը. բնակիչներն հետ նրա մնաս

բարովը շատ արտաշար էր։ Ալեկօ-փաշայի Ֆիրիպօպօ մաներուց առաջ այնտեղ բոլորական զրօշակ էր բարձրացրած. Ալեկօ-փաշայն պահանջեց, որ բոլորական զրօշակի փոխարին թիւրքաց զրօշակ բարձրացնեն, բայց այդ պահանջը անկատար մնաց. քաղաքային վարչութիւնը կամենում էր, նշանակութիւնն տարով այս յուզումներին, ցոյց տալ Բ. Կրան իրաւաւորութիւնը։ Ալեկօ-փաշայն առաջարկեց իրաւարարներ ընտրել, առաջարկութիւնը ընդունվեցաւ։ Այսօր կը կարգացվի այն Ֆիրմանը, որի գորութեամբ Ալեկօ-փաշայն արևելեան Ռուսիայի զենեղաւնահանդապետ է նշանակված, և որի գորութեամբ այնտեղ հաստատվում է օրդանական կանոնադրութիւնը, որանից յետոյ ժամանակաւորապէս թիւրքաց զրօշակ կը բարձրացնեն, որին 101 թիւանօթի պայթիւններ ողջոյն կը սան։

ԼՈՆԴՈՆ, 1830 մայիսի։ Իվիվիվայի մօտ չլիացող Esteralda և Conabonga նաւերի և պերուացոյ Budependessia կոչված զրահաւոր Ֆրեզատի մէջ պատերազմ ծագեց. բոլոր երեք նաւերն էլ ընկղմեցան։

ՀՈՍՄ, 1830 մայիսի։ «Avenir» լրագիրը հարգուած է, որ Զուհեբերան դիմել է Ռուսաստանին, Աւստրիային, Բէրլինին և Շոտլանդիային առաջարկելով օտար պետութիւններին ներկայացուցիչներին մի կարհուր կազմել, քննելու այնպիսի քաղաքական և առևտրական միջոցներ, որոնք կարողանային հարուած տայ այն հացի թանգութեանը որը սպաւում է գերմանական նոր մարային վերանորոգութեան ցուցակից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 17 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 97 ր. 37 կ., երրորդ 96 ր. 50 կ., երրորդ 96 ր. 25 կ., չորրորդ 96 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ 243 ր., երրորդ 238 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 94 ր. 75 կ., երրորդ 95 ր. 12 կ., ոսկի 8 ր. 57 կ.։ Ռուսաց 1 թուր 1 օնցի վրա արժէ 23, 31 պէս. Ռուսաց 100 թուր Գերմանիայի վրա արժէ 199 մարկ, 75 պէս, Փարիզի վրա 245 Ֆր. 75 անսիմ։ Տրամագրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 19 մայիսի։ Իշխանուհի Նինա Նիկոլայեւնա Խուսովայի օժիտը հասնում է մինչև 30 միլիոն։ «Правит. Вѣстн.» լրագիրը հարգուած է, որ Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովայի առողջութիւնը լաւանում է։

Ֆեյ, 1931 մայիսի։ Նրէկ այստեղ կարգացիցան սուլթանի այն Ֆիրմանները որոնց գորութեամբ Ալեկօ-փաշայն զենեղաւնահանդապետ է նշանակուած, և օրդանական կանոնադրութիւնն էլ հաստատութիւն է ստանում, դրանից յետոյ կարգացիցան Ալեկօ-փաշայի յայտարարութիւնը. երկրաւտե յուզումներն պատճառով թիւրքաց զրօշակ չը բարձրացրին։ Ալեկօ-փաշայի յայտարարութեանը արմալի բացականչութիւններով պատասխանեցին. յոյները բողոքեցին բոլորական Ֆիրմանների բովանդակութեան դէմ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 20 մայիսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հարգուած է, թէ Կայսրը հրամայեց 300 միլիոնի 5% ներքին փոխառութիւն անել, անուանելով նրան արևելեան երրորդ փոխառութիւն 100 և 1,000 թուր օրիգացիաներով։ Պրօքէստները վճարվում են վեց ամից յետոյ, սկսելով յունվարի 1-ից

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄԻՔԵՅԻԼԵՆ ԿԵՄՈՒՐՉԻ մօտ Չուբայովի տան մէջ գտնված Ն. Ա. ԴՕՄԱՐԱՅԿՈՒ «ՊԱՐՏԱՄՈՒՐՅԱԿՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՆԱԿԸ գրաւով և պարտամուրհակով ՓՈՂ է տալիս, գընում է առևտրական ՊԱՐՏԱԹՂԹԵՐ, ծախում է ներքին փոխառութեան ՏՈՍՍԱԿՆԵՐ վճարը մաս մաս ստանալով, կատարում է զանազան ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մի և նոյն տեղը գտնվում է «ԽՈՐՀՐԴԱԿՅԵԼՈՒ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՍԵՆՆԱԿԸ» որտեղ կարելի է տեղեկութիւններ ստանալ «ԲԱՂԵՐԵՎԻՆ» «ԲՈՂԵՎԻՆ» և «ՆՈՒՆԻՏՐԵՎԻՆ» գործերի մասին: Գրասենեակը ընդունում է քաղաքային գործերի կատարումն իր ծախսերով, քրէական գործերի պաշտպանութիւն և ամեն տեսակ ԳՐԵՒՈՐ ԵՂԵՍԵՆՆԱԿՆԵՐՈՒ ԿԵՏՐՈՒՄՆ: Ի նկատի ունելով «ԳՐԵՍԵՆՆԱԿՆԵՐԻ» ունեցած չափազանց ՇԼՏ աշխատանքները ցանկացողները հրաւիրվում են ԸՆԿԵՒԵԼՆԵԼ: Ցանկացողները պէտք է յայտնեն մինչև յուլիսի 1-ը: 2-5

Ներկայ 1879 թ-ի յուլիսի սկզբից, տէրութեան թղթաւորութեամբ, թիֆլիսի մէջ հրատարակվում է «ռուս» «Кавказ» լրագրի չափով, քաղաք-գրականական շաբաթաթերթ «Ղ. Ն. ա. տ. ք.» ռուս և հայ լեզուներով հետեւեալ պրօզայով:

- 1) Գրատասանական Ժամանակագրութիւն.
- 2) Տեղական կեանքի ուսումնասիրութիւն, թէ տնտեսական, թէ վիճակագրական ու թէ գիւղատնտեսական կողմերից:
- 3) Գրականութիւն, գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ, լինեն նրանք թարգմանութիւններ թէ ինքնուրոյնութիւններ: Վշնագրութիւն ռուս, հայ և օտարազգի գրականութիւնների:
- 4) Քաղաքականութիւն, քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:
- 5) Մանր լուրեր:
- 6) Մասնաւոր յայտարարութիւններ:

«Ղ. Ն. ա. տ. ք.» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը, թիֆլիսում, առանց տուն հասցենիւր 5 ռուբլ. (1) Ռուսիայի զանազան քաղաքներ շրջելով 5 ռ. 50 կ. Փոստային դաշնակցութեամբ շրջելով արտասահման 6 ռուբլ.: Մտորագրութիւն ընդունվում է թիֆլիս կենտրոնական գրաւորատանցում:

«Ղ. Ն. ա. տ. ք. թ.» համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պահանջները, օտարաբարաբացից պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս գալը ուղարկել ուղղակի «Ղ. Ն. ա. տ. ք.» լրագրի կամբարին այս հասցեով. Григорію Тер-Мелік-сетову, редактору газеты "Трудъ", въ Сололакахъ, на Сололакской ул. у Вознесенской церкви вблизи стараго моста въ Д. Михаіла Галустова подъ № 110.

Միւթեր և անվաղ յօդուածներ «Ղ. Ն. ա. տ. ք. թ.» կամբարութիւնը ընդունում է միմիայն և յատկապէս ռուս, հայ, ֆրանսիական և վրացական լեզուներով: Կամբար-հրատարակող Գրիգոր Տէր-Մելիքեանցիկեան:

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր դպրոցի աշակերտների տարեկան հարցաքննութիւնը լինելու է հետեւեալ կարգաւ:

Ամիս և ամսաթիւ	Դասարաններ	Առարկաներ
Մայիսի 2	Ե. 2	Ռուսաց լեզու
3	Ե. 2	Հայոց լեզու
7	Ե. 2	Փրանսիական լեզու
11	Ե. 2	Ընդհանուր պատմութիւն
14	Ե. 2	Արեւբա և երկրագիտութիւն
15	Պատրաստականի 1 և 2 բաժանմունքները	Բոլոր առարկաներից
16	Պատրաստականի 3 բաժանմունքը	Հայոց լեզու և թուրքարանութիւն
17	Պատրաստականի 3 բաժանմունքը	Մտացած առարկաներից
18	Ե	Կրօն և Տօմար
22	Ե	Նիւդիցական պատմութիւն
23	Ե	Մանկավարժութիւն
25	Ե	Ռուսաց պատմութիւն
26	Ե	Կրօն և Աստուածաբանութիւն
28	Ե	Ֆիզիքա և քիմիա
30	Ե	Հայոց մատենագրութիւն
31	Ե	Հայոց պատմութիւն
Յունիսի 4	Ե	Աշխարհագրութիւն
5	Ե	Ընդհանուր մատենագրութիւն

I, II, III և IV դասատանց գրաւոր քննութիւնները լեզուներից և մատենագրական լինելու են I և II դասա տանց մէջ մայիսի 22-ին և 23-ին իսկ III և IV դասատանց մէջ մայիսի 24-ին, 25-ին և 27-ին:

Հարցաքննութիւնը մինչև մայիսի 26-ը լինելու է զինի ճարտ. 5½ ժամից և այնուհետև առաւօտները 8 ժամից, իսկ պատրաստական դասատան քննութիւնները լինելու են նոյնպէս առաւօտները:

Պաշտօնակատար տեսչի Արշակ Նահապետեանց

Նրևանեան Հրատարակի վրա թ.Ա.Մ.Մ.Մ.Ս.Վ.Ի կարամանարայի դէմ ուղղված № 11. տան վերի յարկում վարձով արվում է մէկ ԴԱՂԻՃ ծառայով, լու կարամանարով և առաւօտ-երեկո սամովարով. դահլիճը մի բաղնիք ունի իր առաջ: Կինն է ամսական 40 ռուբլ. Բացի դահլիճը մի և նոյն տանը վարձով արվում են նոյնպէս առանձին ՍԵՆՍԱԿՆԵՐ կարամանարով, ծառայով, սամովարով և լուսարարութիւնով. այդ սենակաները ամսական արժեն 25, 20 և 15 ռուբլ.: Այդ սենականերում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի և նոյն տան դրան առաջ միք ծախող ՅԱՊՎԻՆ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ (ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆՈՒՄ)

Վաճառում են հետեւեալ հայերէն գրքերը	Բ. Կ.
1. Մինաս Չերազ՝ ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ	1 —
2. — — ԱԶԳԱՅԻՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	1 —
3: — — ԻՆՁ ԵԱՂԵՍՆԵՐ ԲԵՐԼԻՆԻ ՎԵՂԱԺ	40 —
4. — — ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱՅ	60 —
5. Առաքելեան՝ ԳԵՈՐԳ ՌՈՒԼԵՍՏՆ (Թարգմ.)	60 —
6. ՍՈՒՆԳՈՒԿԵԱՆ ՊԵՊՈ կոմէդիայ 3 ար.	60 —
7. Բարրօ՝ երկխոսների առ իրենց ծնողք պարտ.	40 —
8. Տիւզէնձեան Տոմարակալութիւն (կաղմած)	2 —
9. Կոստանեան՝ Հիւսուածք 3 հատոր	3 —
10. Պող և Վերգինէ, ոսկէկազմ, գրաբար	3 50

Շուտով լոյս կը տեսնի Ալեկսանդրով-ԹԱԻԱՄԱԶ ՄԵՂՈՒ անունով գրքովը, թարգմանութիւն օր. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ, գեղեցիկ պատկերներով, գինը լինելու է 40 կ. գրքովը արժանացել է առաջին ՊԱՐԳԵԻԻ Ֆրէբէեան ընկերութեան. վաճառվելու է ԿԵՆՏ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ:

Ննցադիրների կանոնադրութեան XIV հատորի 1 յօդուածի համեմատ ոչը իրաւունք չունի հեռանալ իր բնակութեան տեղից առանց օրինաւոր վկայութեան կամ անցադրի (յօդ. 2, 5, 4, 9, 10, 12, 13, 14, և 15 նոյն կանոնադրութեան): նոյն կանոնադրութեան 141 յօդուածի համեմատ մէջ չանկը, բոլոր կարգի գիւղացիի և ծառաները, որոնք իրանց բնակութեան տեղից բացակայ են և գտնվում են կայսերութեան զանազան տեղերում 30 վերստ հեռավորութեամբ իրանց բնակութեան տեղից արհեստներով կամ աշխատանքով ապրելու համար, պարտաւոր են տպված անցադիրներ ունենալ: Մտաւայութեան մէջ գտնվող և ծառայութեանից դուրս եկած աստիճանաւորների համար, նոյնպէս հոգևորականների, կուսակրօնների, սոցիալական և անձնական աշխուկանների, սրանց պրիկնիւրի անցադիր վերցնելու ձեռք մեկնված է անցադիրների կանոնադրութեան XIV հատորի 51, 52, 57, 59, 60, 63, 68, 71, 72, 75, 89, 92, 112, 118, 119, 139, և 142 յօդուածների մէջ: նոյն կանոնադրութեան 41 յօդուածի հեմեմատ ժամանակամիջոցը անցած անցադրով ոչը ոչ մի տեղ ապրել չէ կարող: Այն անձները, որոնք ժամանակամիջոցը անցած անցադիրներ ունեն, կամ նրանց կորցրել են, պարտաւոր են անցադիրների կանոնադրութեան 42 և 211 յօդուածների համեմատ վարվել: Առանց օրինաւոր վկայութեան կամ ժամանակամիջոցը անցած անցադիրներով ապրողները, բացի այն որ պէտք է տան հարկաւոր վճարը անցադրի համար Հաշտարաբ դատաւորներից որոշված պատիժների կանոնադրութեան 61 յօդուածի համեմատ ենթարկվում են դրամական տուգանքի, որ լինելու օրը 15 կոպէկից և ընդհանուր գումարով 10 ռուբլուց ոչ աւելի: նոյն տուգանքի ենթարկվում են և նրանք, որոնք իրանց մօտ պահում են մարդկերանց առանց անցադրի, կամ ժամանակամիջոցը անցած անցադրով վերև մեկնած հանգամանքները ի նկատի ունենլով առաջարկում են Թիֆլիսի բնակիչներին, եթէ նրանց մօտ բնակվում են կամ ծառայում են այնպիսի մարդիկ, որոնք օրինաւոր անցադիրներ չունեն, կամ որոնց անցադիրներ ժամանակամիջոցը անցել է, այդ պիսիներին ներկայացնել իմ վարչութիւնը, հակառակ դէպքում այս պահանջը չը կատարողները դատաստանի կենթարկվին Հաշտարաբ Դատաւորներից որոշված պատիժների կանոնադրութեան 61 յօդուածի համեմատ: Մի և նոյն ժամանակ հարկաւոր են համարում յայտնել քաղաքի պ. պ. բնակիչներին, որ այն անձինքներին, որոնք կը բռնվին առանց վկայականների կամ անցադիրների երբէք չեմ յանձնի մէկի պատասխանատուութեամբ, այլ էտապով կուղարկեմ իրանց հայրենիքը: Մայիսի 6 1879 թ. Թիֆլիս: Թիֆ-

լիսի գլխաւոր Պօլիցիսկայսեր գնդապետ Սերկիւզ:

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓՈԽԳԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿԸ պատիւ ունէ յայտնել ընկերութեան պ. պ. անդամներին, որ ընկերութեան ԲՆԱԿԱՐԱՆԸ արդէն վարձված է Չիխալսովի տանը, Գոյօլիսիսի պրօսպեկտի վրա և խնդրում է անդամական ՏՈՒՐԲԸ չը վճարող պարոններին, նոյնպէս ընկերութեան անդամ գրվել ու փող վճարելու և տունակ ստանալու համար ցանկացողներին զիմե ընկերութեան ստարշինա Պ. ՄԵՀՐԱԹՎԻՆ, Գոյօլիսիսի պրօսպեկտի վրա, ճիշտ վի տանը, կանոնթ № 5:

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ իր ներկայութեամբ ՄԱՅԻՍԻ 22-ին լինելու է ԱՃՈՒՐԴ առանց ԿԻԿՆԱՃՈՒՐԻ ՄԵՏԵՍԻ ամրոցի և ԲԱՆՏԻ համար երեք ստուարանի ՓԱՅՏ հասցեն լու համար: ՄԵՏԵՍԻ ամրոցի համար հարկաւոր է 149 սաժէն և 1 արշին, իսկ բանտի համար 136 սաժէն: Փայտը պատրաստվում է եկող 1880 թուականի համար:

200 տակառ ՑԵՄԵՆՏ (Պորտլանդի) ստացված է: Դիմել արևիտեկտոր պ. ՍԿՈՅՆՆԻՆ, Արևիտեկտայ փողոցում, Ճէր-Ղուկասօվի տանը:

ՄԵՐԵՄԵՆԵ-ՅՈՎՆԱՆՆԵՆՆԵՆ ՕՐԻՈՐԻՆՑ ռուսումնարանի տարեկան քննութիւնները լինելու են հետեւեալ կարգով:

Մայիսի 15-ին Կրօն և Սրբազան Պատմութիւն

16 և 17 Հայոց լեզու

19 Ռուսաց լեզու

22 Թուրքարանութիւն

25 Բնական գիտութիւն

Ներ և Ընտարհագրութիւն

Տեսուչ ռուսումնարանի

Յ. Չիխալսեանց